

Քեզ յախտենական սիրով
սիրեցի: Երեւ. ԼԱ. 3
Ինչպէս որ մայր մը իր որդին
կը մխիթարէ, այնպէս ալ ես
ձեզ պիտի մխիթարեմ: Ես. 42. 13
Քոս խօսքդ իմ ոտքերուս
Երազ է: Սաղ. ձժԹ. 105

ԲԱՆԲԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Ճշմարտութիւնը պիտի գիտնաք, ու ան ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ: Յովհ. Ը. 32
Ուրեմն Քրիստոսի կողմանէ դիտարկուած ինչ կ'ընենք, . . .
կ'աղաքենք ձեզ ի Քրիստոսի կողմանէ, հաշտուեցէք Աստուծոյ հետ: Բ. Կորնթ. Ե. 20

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Բաժանորդագին տարկ.— Յրանսա եւ Սուրիա 4, Պալքանեան Երկիրներ 5 Յր. ուրիշ Երկիրներ 1,50 Շիլ.

Rédacteur H. N. Ghazarossian, 12, Rue des Dominicaines — Marseille (France)

ԹԻԻ 4

Ա. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1925

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿԱՄ ՎԱՀԱՆԻԴ ՏԱԿԸ ԿԱՄ ԱՆՈՐ ՎՐԱՅ

Պատերազմէ՛ հաւատքին բարի պատերազմը, բռնէ՛ յախտենական կեանքը, որուն կանչուեցար . . .
(Ա. Տիմ. 2. 12):

Այս ողջերթով կը բաժնուէին ինչ յոյն մայրեր պատե-
րազմի դաշտը մեկնող իրենց սիրասուն երիտասարդ զա-
ւակներէն: Միմէ խորհրդաւոր չէ՞ ան՝ Դեղփեան պատ-
գամներուն նման: Եղա՞ծ է միմէ պատմութիւն ուսանող
ս եւ է պատմի, որ այս խօսքին առջեւ կանգ առած ջրլլայ,
անոր վրայ քիչ շատ ջնտածէ ու անկէ ջներշնչուի:

Ի՞նչ բուէ կ'ուզէին այդ յոյն մայրերը: Իրենց նպա-
տակն էր քաջալերել այդ որդիները, քաջարար կուրծք տա-
լու թշնամիին . . . չպարտուելու, այլ յաղթելու: Անոնց մտ-
քին հեռապատկերը լուսազարդուած էր այն հրապուրիչ
տեսարանով, որուն մէջ իրենց քաջը, դալար դափնին գըլ-
խուն՝ վահանը վեր բռնած, յաղթական կամարներու տա-
կէն անցնելով զիրենք ողջունելու կը փութար, եւ վկամ ա-
ւելի մեծ դափնիով մը ամբողջ մարմինը զարդարուած,
զինուորական պատիւներով նոյն յաղթական կամարներուն
տակէն կ'անցնէր, վահանին վրայ անշնչացած եւ սակայն
յ ա ղ թ ա կ ա՛ն :

Ինչի՞ր չէ՛ մահը: Մայրիկին միտքին մէջ արդէն այդ
ալ կար: Բա՛ն է որ որդին դասալիք եղած չէ. բա՛ն է որ
նա ճակտէն ու կուրծքէն խոցուած է. բա՛ն է որ նա հայ-
րենիքի յաղթութեան մեծ գործին մէջ դեր ունեցած է, ու
Թերեա մեծ չէր: Անոր մահը պարտութիւն չնշանակեր
քնաւ: Պարտեալ թշնամի զինուորներէն շատեր անվիրա-
ւոր, եւ սակայն պարտեալ ու գլխիկոր են:

Այս խօսքը կը ցուցնէ թէ ինչ ժամանակուան այդ մայ-
րերը ի՞նչ բարձր գաղափարներ եւ ի՞նչ վեհ հոգի կը կրէին:
Ներկայ դարուս մարդիկ մե՞ծ դասեր կրնան առնել ա-
նոնցմէ եւ մենք Հայերս՝ ո՛չ նուազ:

Մեզ համար ամէն ատենէ աւելի մանաւանդ այս
օրերս այժմէսութիւն ունի անոնց ոգին ու խօսքը: Կ ա մ
վ ա հ ա ն ի գ տ ա կ ր կ ա մ ա ն ո Ր վ Ր ա յ :

Հայ ազգը հարիւրաւոր տարիներէ ի վեր պայքարի
մէջ եղած է խաւար իշխանութեանց ընդդէմ: Այդ հոգե-

կան պայքարին մէջ, վ որդանէն առկին տուած ենք բազ-
մամիւն քաջագուն՝ զոհեր, որոնք մեր սրտերուն մէջ տաք
տեղ կը գրասեն, վառելի անոնք պատերազմի դաշտին
մէջ կորսուած պարտեալներ չեն, այլ մեր սրտերուն վե-
րադարձած են իրր յաղթականներ իրենց վահանին վրայ:
Մահը չնշանակեր պարտութիւն: Մեր սա վերջին տարիներ
րուն տուած մարտիրոսներու ահագին թիւը պարտութիւն
չնշանակեր երբեք: Քրիստոս ալ խաչուեցաւ եւ Տիրոջ այդ-
խաչելութեան եւ մահուան մէջ էր անոր մեծ յաղթութիւնը,
— տ ի ե զ ե Ր Ք ի ա մ ե ն ա մ է ձ յ ա ղ թ ո Ւ Թ ի ա ն ը :

Մեր նախահայրերը՝ Գրիգոր Լուսաւորիչը, Սահակ,
Մեսրոպ, Նարեկացի կամ Շնորհալի մեզի նոյն պատգամն
է որ կուտան: Կ ա մ վ ա հ ա ն ի գ տ ա կ ր կ ա մ ա ն ո Ր
վ Ր ա յ : Վահանին վրայ յաղթականներ արդէն շատ սը-
սինք: Աստուծոյ հոգիով ջներշնչուած այդ սուրբերը մկովէ
կ'ակնկալեն ըլլալ յաղթականներ վ ա հ ա ն ի ն տ ա կ ր :

Հին եւ նոր ցամաքներու վրայ, ամէն երկրի ու բա-
ղաքներու մէջ թող զօրաւոր կերպով հնչեցնէ մեր ժողո-
վուրդի ականջին, — մեր պատանեաց եւ աղջկանց, օրիոր-
դաց եւ երիտասարդաց, կանանց եւ այրերու՝ « վ ա հ ա ն ի գ
տ ա կ ր » :

Թող ներուի մեզ բուէ թէ մեր երկսեռ երիտասարդու-
թիւնը այս հարցին առջեւ ապիկար կը գտնուի, թէ մա-
սամբ իմացականապէս, մանաւանդ թէ կամովին:

Մեր երիտասարդները անհոգ եւ անտարբեր կրօնքի
եւ հոգեւոր կեանքի հանդէպ, իրենց ժամանակը անարժէք
զբաղումներով կ'անցնեն. ուրիշներ իրենց շունչը կը վաք-
մեցնեն սքանաւաններու ազտու օղերուն եւ քնաւ անհիւս-
գիստ չեն զգար ինքզինքնին. ուրիշներ ամաչուալի քողը
պատուած, չեն խափիր նոյնիսկ իրենց ժամանակներու առջեւ
այսպէս ի արարքներու մէջ գտնուել: Օրիորդներ, իրենց
նախկին պարկեշտութիւնը հայրենիք թողուցած, պոռոտ
գոյներով անեւ ու անճոռնի հագուած իրենց գոյութիւնը

կարգադրեն, հերետիքով իրենց նոր միջավայրի ամենա-
հարթին խառնուրդ տրամադրեն:

Տրդունչ առ Աստուած, նորնիսկ հայհոյութիւն եւ յու-
խարանք Աստուածանման հանդէպ յաճախակի բնութեամբ, իսկ
եկեղեցասիրութիւն, աստուածսիրութիւն, Աստուածաշունչի
ընկերացում ու հոգեւոր խորհրդածութիւնն ինչպէս անու-
նը կարծիքներ են: Ընտանիքի հայր մը քանի մը ամիս ա-
ռաջ կը հարցնէր մեզի. «Այդ բաներուն տակաւին կը հա-
ւատա՞ս»: Սա մի անկեղծ գիւղացի էր. ի՞նչ եղաւ անոր
ուրեքէ աչք. ճանրուն մէջ մնայ դեռ, ի՞նչպէս պիտի
կրճէ նա իր գաւազները:

Ո՛հ, Հայեր, ի՞նչ է՞ք ձեր աչքերը, մի՛ քննաք, նիբ-
հելու ժամանակն անցած է, հայ ազգը վտանգի մէջ է,
պարտութիւնը մտաւորաւ է: Ժամանակ է արձնուածն,
մեր հայրերէն մեզի ինկած միակ թանկագին ասանդը վը-
տանգուած է, թիչ վերջը՝ մարտիկ եւ վահան պատերազմի
դաշտին մէջ ջախջախուած ու սփռուած պիտի գտնէք:

Թող այսօրուան խօսքը որոտացող զանգ մը ըլլաւ
մեզի համար եւ հիշեցնէ երկրէ երկիր: Հայ երիտասարդ,
հայ օրիորդ, հայ կին, հայ այր, վա հայնի դ. առ կը:
Բանի մը շարժմ. յունայ մեր սիրելի բարեկամը՝ Տըթ.
Պայարա Տաս Ամերիկահայոց կ'ըսէր Թէ կ'ակնկալէր
որ Հայերը իրենց միտքնորական գործը պիտի ընէին Մի-
ացեալ Նահանգաց մէջ: Բայց Ամերիկահայերը ի՞նչպէս
պիտի կհաւարեն այս մեծ գործը, եթէ Ս. Հոգւոյն գալորցը
յաճախած չըլլան:

Ֆրանսացի մեր բարեկամ Տըթ. Պէրոն յաճախ ար-
տալատուած է եւ միշտ նոյն հաւատքով կը գործէ Թէ
Ֆրանսա գաղթող Հայեր օր մը իրենց կեամ երկրին մէջ
աւելարանիչներ պիտի ըլլան: Բայց միթէ մեր կողմէն
այդ ուղղութեամբ ու եւէ պատրաստութիւն մը կա՞:

Պուկարիոյ, Յոնաստանի, Սուրիոյ եւ ուրիշ երկիր-
ներու Հայեր գիտա՞կ են իրենց կոչման՝ վա հայնի դ.
առ կ:

Ա՛րդ, ժամանակ է մեզ քունէն արթննալու եւ մեռել-
ներէն կանգնելու: Ի քրիստոս մեզի ըսյ տայ (Եփես. Ե. 14):

Թող իւրաքանչիւր հայ երիտասարդ կամ օրիորդ Թա-
մարիէ իր վրայէն կեղծը — հի ին՝ մարդը — եւ հաւա-
տարիմ մնայ իր կոչման:

Յիշեցէ՛ք ձեր առաջնորդները... եւ իրենց հա-
պտարին նմանող եղէք. (Երբ. ԺԳ. 7):

Ե՛ւ դէպի հի ին՝ հաւատքը:

Վանդի ժամանակ է որ դատաստանը Աստուծոյ
տունէն սկսի. (Ա. Պետ. Գ. 17):

Առաջին դարերու արձնուածն նման արձնութիւն
մը հարկ է՝ Հարկ է Ս. Հոգւոյ սաստկաշունչ հով մը հայ
ազգին վրայ, նոր շտրկաց ժամանակ մը, հասկնալու ճըշ-
մարտութիւնը, հասկնալու Աստուծոյ փրկագործութեան
մեծ ծրագիրը:

Թող իւրաքանչիւր քահանայ, իւրաքանչիւր առաջ-
նորդ կամ հոգեւոր հովիւ, իւրաքանչիւր հոգեւոր կեանք
գիտցող անձնատիրութիւն իր մանն ու բաժինը թերէ՛ այս
արձնութեան մեծ գործին մէջ, որ քրիստոս իր իրաւունքին
հանդի,

Վասն զի. խոստումը ձեզի է ու ձեր
նորդացը:



ՍԱՏՈՒ ՍԸՆՏԸՐ ՍԻՆԿԸ

(Շարունակութիւն 20 րդ էջէն)

Է.

Մեռնողներու պէս՝ եւ ասիա կենդանի ենք:
(Բ. Կորնթ. Զ. 9)

Լքեալ պատանին դէպի ու՞ր կրնար շտկել
իր քայլերը:

«Աղուէաները որչէր ունին, երկինքի թըռ-
չունները՝ բոյներ, բայց Որդին մարդոյ տեղ մը
չունի, ուր իր գլուխը դնէ» (Ղուկ. Թ. 58): Ահա
հոս ալ մեծ Ուսուցչին ճամբան իր առջեւ բաց-
լած էր: Ս.յս վերջին փորձութիւնը նախապէս
գորշակած չէր քնաւ: Իր վրայ յարձակող այդ
վիշտերուն առջեւ ընկրկելու արհաւիրքը պա-
տեց զինքը:

Բաւական առաջանալէ յետոյ, անցորդնե-
րու ուշադրութենէն հեռու՝ լռին վայր մը փրն-
տոեց, ուր նա վայրկեան մը իր սրտին վրայ
ճնշող բեռը երկնաւոր հօրը տանելով կազդուր-
ւելու էր: Ս.յդ վայրը շատ չանցած գտնուեցաւ
եւ վշտահար խորհուրդներով տուայտող պա-
տանին՝ հեղեղանման արցունքներով ու հա-
ռաչանքով երկնային սեղանին մատուցանեց իր
ինչիւրքը: Սընտրրի վիշտը հետգհետէ կը հան-
դարտէր. իրեն այնպէս կուգար որ՝ իբր թէ՛
«մայր մը իր որդին կը մխիթարէ» (Եսայ. ԿԶ. 13)
եւ հի՛ն ժամանակներէ ու հեռու երկրէ մը հըն-
չող կազդուրիչ խօսք մը, որ իր զարմին ամե-
նալուրջ ու խոհուն քահանաներէն իսկ չէր լը-
սած եւ հայրենի բազմիւններէն չէր քարոզուած:
այդ խօսքը իր կուրծքին մէջ արձագանգ գրտ-
նելով՝ հոն մխիթարութիւն եւ յոյս կը ներշնչէր:

Տէրը իմ հովիւս է.

Եւ բանի մը կարօտութիւն պիտի չունենամ:
Չիս խտուաւտ արօտներու մէջ կը պառկեցնէ.
Հանդարտ ջուրերուն քով ինձի կ'առաջնորդէ.
Հոգիս կը նորոգէ:

Իր անուանը համար արդարութեան ճամբաներուն մէջ,
կ'առաջնորդէ ինձի:

Թէեւ մահիւն շուքի ձորին մէջ ալ պարտիմ,
Չարէն պիտի չվախմամ,
Վանդի Գուն ինձի հետ եւ.

Բո՛ւ, ցուպը ու գաւազանը՝ անոնք զիս պիտի մխի-
թարեն:

Սեղան կը պատրաստեն իմ առջեւ իմ թշնամիներուս
դիմաց:

Իմ գլուխս խղով կ'օծեց
Իմ բաժակս խիտ լեցուն է:

Յիրաւի բարեխարութիւնը ու ողորմութիւնը ինձի հետ
պիտի գտնուի կեանքիս բոլոր օրերուն մէջ:

Ու շատ օրեր (յաւիտեան) Տիրոջը տունը պիտի բռնակիսի:

(Սաղ. ԻԳ.)

Արքայ երաժշտին այս կազդուրիչ խօսքերը իր սրտին մինչեւ խորերը թափանցեցին եւ զինքը մխիթարելով՝ աննախընթաց հաւատքի համոզումով ու կեանքի կորովով պարարեցին, անորոշ օտարութեան ղէմ կուրծք դնելու: Թէեւ իր առաջին մտադրութիւնն էր Փ ա թ ա լ ի ա հասնիլ ու անկէ Լ ու տ ա ն ի ա երթալ, բայց այժմ այդ որոշումը փոխելով նա Բ ա մ փ ու ը է վստուած իր հին ծանօթ քրիստոնեաներուն քով երթալ ուզեց: Ասոնք մօտակայ Բ օ փ ու ը ր քաղաքը կը գտնուէին, բնիկ երէցի մը թեմական հովուութեան տակ:

Սընտրրի՝ հոն մխիթարութիւն եւ խրատ ընդունելու յոյսը ի դերեւ ելած չէր. պատրաստ ձեռքեր իրեն կարկառուեցան ու հազիւ թէ առատօրէն շոյալուած սիրոյ խօսքեր, համակրանաց արտայայտութիւններ իր ականջին կը հընչէին . . . պատանին յանկարծ ընդարմացած անդամներով, քարացած վիճակի մը մէջ գետին փռուեցաւ . . .

Սընտրը թ ու ն ա լ ո Ր ու ա ծ է ր :

Իր հօրենական տան մէջ, վերջին կերակուրին խառնուած ուշ բայց անյեղլիօրէն ազդեցիկ թոյն մը կերցուցած էին, անոր մահովը՝ ընտանիքին վրայ եկած անպատուութիւնը քաւելու համար . . . :

Ահաբեկ այս բարի ներկաները անմիջապէս վերցուցին զայն ու երէցին տան մէջ պառկեցուցին: Ուրիշներ՝ մօտը բնակող հնդիկ ճարտար բժիշկ մը օգնութեան կանչեցին:

Բժիշկը ծանրապէս թունաւորուած ըլլալու հաստատեց: «Այս թունաւորումը անխուսափելիօրէն մահուան կ'առաջնորդէ», ըսաւ. ապա քանի մը կարգադրութիւններ ընելէ յետոյ յայտարարեց թէ ատկէ աւելի բան չէր կրնար ընել. թերեւս ըսաւ, «քիչ վերջը չափազանց արիւնահոսում տեղի պիտի ունենայ ինչան մերձեցող մահուան, վախնամ թէ մինչեւ առաւօտ չապրի»: Հիւանդը մերթ կը պաղէր եւ երբեմն շունչը բոլորովին կը կտրէր: Բժիշկին մեկնումէն յետոյ, անոր նախագուշակութեան համաձայն, արիւնահոսումը սկսաւ. բայց եւ այնպէս չափազանց արիւնահոսութենէ մը յետոյ յանկարծ դադրեցաւ: Պատանին բերանը բացած շատ տկար ձայնով մէկ երկու բառ արտասանեց: Իրեն համար ծունկի եկող անկեղծ հաւատքով աղօթող այդ Հնդիկները, այս

զարմանալի փոփոխութենէն քաջալերուած, աւելի հաւատքով սկսան աղօթել:

Երբ առտուն բժիշկը նորէն եկաւ, գարմանքով տեսաւ անկողնին մէջ տկար եւ սակայն հանդարտօրէն պառկած պատանին: Գուշակուած մահը վրայ հասած չէր: Սընտրրի նուազուն եւ սակայն սիրովառ ջինջ աչքերէն աննկարագրելի կայծ մը ինկաւ բժիշկին սրտին մէջ եւ կարծես նետի մը նման անոր վերջին մէջ մխրճուեցաւ: Սա իր ներքին հանդարտութիւնը կորսնցուց . . . :

Սընտրը դեռ յաճախ օրօրուեցաւ կենաց ու մահուան միջեւ: Անոր համար պէտք եղած բոլոր խնամքները հայրական սիրով կը կատարուէին:

Բժիշկը մասնաւոր հոգածութիւն ու համակրանք կը ցուցնէր, վասնզի ամէն այցելութեան կը գտնէր նա ձեռնամած պատանին, սրտի խաղաղութեամբ լեցուած իր ակնարկը ղէպի հեռու՝ ուղղած, պատիկ գրքոյկ մըն ալ այդ ձեռքերուն մէջ, ու մտածկոտ: Բժիշկը հարցուց օր մը երէցին՝ այդ գրքին ինչ ըլլալը, վասնզի կը զգար թէ պատանին անկէ կրնդունէր կեանքի ուժն ու աննկարագրելի խաղաղութիւնը, որ անոր ղէմքին վրայ կը կարդացուէր: Բժիշկը քիչ օրեր յետոյ նոյն գիրքը (նոր կտակարանը) գտած, ուսումնասիրելու սկսած էր եւ քանի մը օր վերջը Սուքարի մէջ եղող ժողովուրդին նման կրնար ըսել. «Մենք մեր աչքերովը տեսանք ու հաւատացինք»: Այդ բժիշկը այսօր Գրիստոսի կենդանի վկայ մըն է եւ միսիոնարական հիւանդանոցի մը մէջ օրհնաբեր գործունէութիւն ունի:

Սընտրը քանի մը ամիս յետոյ բոլորովին ապաքինած հրաժեշտ կուտար իր հիւրընկալներուն: Պատանի մարտիրոսը ապացոյցը առած՝ թէ զինքը ազատողը Երկնաւոր Բժիշկն էր եղած, հիմա աւելի վստահօրէն կրնար ըսել թէ նոյն Տէրը պիտի օգնէր իրեն իր ծանր խաչն ալ վերցնելու:

Լ ու տ ա ն ի ո յ մ է ջ , ուր նա դարձեալ ընդունելութիւն գտաւ, հոգ տարուեցաւ որ պատանիին փափուկ զգացումները առաջուան պէս չվիրաւորուէին:

Սընտրը հազիւ դարձեալ իր ուսման կը նըւէրուէր, ահա նորէն կը սկսէին խոչընդոտները իր ազգակիցներու կողմէն:— Ասոնք ամէն տեսակ ծուղակներով ու խորամանկութեամբ զինքը բռնելու եւ փախցնելու փորձեր ըրին, ու երբ անկարելի եղաւ, օր մըն ալ քա-

դաքին ամբողջ ժողովուրդը խուժանային յարձակում մը գործեց միսիոնարական կայանին վրայ, պահանջելով պատանին: Ոստիկանութեան հորովի միջամտութիւնը հազիւ կրցաւ ժողովուրդը ցրուելով քաղաքը խաղաղեցնել:

Օրեր կ'անցնէին եւ շաբաթներ իրարու կը յաջորդէին: Օր մը երբոր իր սենեակին պատրշգամին վրայ նստած կը մտածէր, յանկարծ նշմարեց որ ծերացած կորաքամակ եւ հազիւ ինքզինքը փայտին միջոցով քաշկոտող մարդ մը հաստատութեան մեծ դռնէն պարտէզ կը մտնէր: Մնոր շարժումները ծանօթ էին իրեն, թէեւ դէմքը բոլորովին խեղաթիւրուած, աչքերը խոռոչներն ինկած, Սրնտրրի հայրն էր ան՝ Շէր Սինկան, առիւծը, ո՛հ որքա՛ն տանջուած ըլլալու էր այդ ժամանակամիջոցին: Սրնտրր ցատքեց իր տեղէն զսպանակէ մը մրդաւածի պէս, վազեց հօրը դէմ, ու հայր եւ որդի ողջագուրուեցան: Արտասուլթոր հայրը գրկեց իր սիրասունն որդին, սեղմեց ու սեղմեց զայն սրտին վրայ, համբուրեց ու համբուրեց իր Մնտրըրը, որ զգաց թէ ի՛նչ անագին կարօտ մը կը մխար իր հօրը աւերեալ սրտին մէջ:

Վերը պատշգամին վրայ նստեցան: Հայրը սկսաւ պատմել տունէ՛ն, հին ժամանակներէ՛ն, այն երջանի՛կ ժամանակներէն, երբ մայրը տակաւին ողջ էր ու իրենք Հիմալայայի կուրծքին վրայ Սիմլայի մէջ իրենց ամարանոցը կը գրտնրէին: Պատմեց մայրիկին նուիրման, անոր բարձր մտքին ու հաւատարիմ սրտի մասին . . .

Սրնտրրի տյգ վայելքները, մանկական կեանքի, մանաւանդ մայրական գուրգուրանքի յիշատակները իր մտքին մէջ կը վերազարթնուին, եւ յանկարծ իր մտքին մէջ արթնցան այն հազարաւոր կապերը, որոնք հօրենական տան եւ սիրելեաց կը կապէին զինքը:

Իրիժէ նոր հաւատքիս համար այս ամէն բաներէն զրկուելո՞ւ եմ,

Իրիժէ Աստուծոյ կա՛մքն է որ ես բաժնուիմ իմ սիրելիներէս: Կարելի չէ՞ որ հոն քրիստոնէայ մ'նամ:

Ահա հարցը:

Բայց նազովրեցիին հետեւիլ ուզող այդ ճշմարիտ աշակերտին մտքին մէջ այդ հարցին լուծումը երկարատեանի չէր կարօտէր: Իր սրտէն կը պոռթկային ետեւէ ետեւ հետեւեալ խօսքերը, ա՛խ նոյն վարդապետէն ըսուած:

«Ես խաղաղութիւն բերելու չեկայ, հապասուր»:

«Ով որ իր հայրն ու մայրը ինձմէ աւելի կը սիրէ, ինձի արժանի չէ»:

«Ո՛չ մէկը որ ձեռքը մաճին վրայ կը դնէ ու ետին կը նայի, Աստուծոյ Թագաւորութեանը յարմար է»:

Միթէ լաւ չէ՞ր ըլլար որ այս համարները կտակարանի էջերուն մէջ լուռ մ'նային եւ իր մտքին մէջ ալ քնացած, բայց կը տեսնէր որ խաչը կրող Յիսուսի ետեւէն էր իր ճամբան . . .

Մնտրըր յաղթած էր . . . : Վեր վերցուց իր աչքերը եւ սիրալիւր դիտեց իր հայրը, իր ամբողջ էութեամբ փորձեց անոր ցուցնել այն սէրը, որ հայրական հնազանդութիւնը դիտցող եւ գնահատող պատանի մը պիտի ցուցնէր եւ գորովալից սրտով ու արասուալից աչքերով եւ սակայն վճռական շեշտով յարեց. «Այո՛, հայրիկ, ամէն ինչ որ կը պատմես իրական է, եւ ես կ'ընդունիմ թէ իմ քրիստոնէայ ըլլալս ձեզմէ անագին զոհողութիւն կ'ենթադրէ, բայց եւ այնպէս ըսելու եմ քեզ թէ՛ ես Քրիստոսի վրայ ունեցած հաւատքիս մէջ մ'նալու եմ եւ պիտի մ'նամ»:

Երբ հայրը եկած ճամբայէն դարձեալ յուսահատ կը վերադառնար, ու երբ որդին արտասուլթոր աչքերով այդ սիրելի անձին հետ-զհետէ աներեւութանալը կը դիտէր, երբեմն այնպէս կուգար իրեն որ բարձրաձայն կանչէ իր հայրը. «Հայրի՛կ, հայրի՛կ, սպասէ՛ կուգամ, ալ բա՛ւ է քու քաշած տառապանքներդ տեսնեմ . . .»: Բայց դարձեալ անշարժ մ'նաց . . . :

Այդ օրէն սկսեալ իր կեանքը բացարձակապէս վտանգի մէջ էր. ուստի միսիոնարական կայանէն զրկուեցաւ նա ուրիշ քաղաք մը. Ս ա պ ա թ ու :

Հոն Հիմալայայի ստորոտը, քանի մը շաբաթներ ալ սպասելէ յետոյ, 1905 սեպտեմբեր 3 ին 16րդ տարեդարձի օրը, օրինականապէս կրօնափոխ ըլլալու տարիքին մէջ գտնուելով՝ Մնտրըր Սինկ վեր. ր էն տ մ ա ն է ն ընդունեց Ս. Մկրտութիւնը:

Պատանի քրիստոնէան իր լեզուով երգ մը կ'երգէր, որ շինուած էր ԻԳ. Սաղմոսի վրայ եւ սաղմոսերգուին հաւատոյ միահողոյն ներդաշնակութեան լիովի կը համաձայնէր:


«Տէրը իմ հովիւս է, ես բանի մը կարօտութիւն պիտի չունենամ»:

(Շարունակելի)

Յ. Ն. Ղ.



ԿԵՕՐԻՒՆՄԵՅԵՆԻՆ ՄԵՎՃՈՒՑԻՅԵԹԻՆԷ ՇԻՒՓՆԷ



Իւլէմա վէ միւթէֆէքքիր քիմսէլէր պու կիւն հէր հանկը պիր գէմանտա օլտուղունտան գիյատէ ալէմտէ կէօրիւնմէյէն պիր Չաթըն մէվճուտ իտի-յինի գապուլ վէ իգրար էթմէքտէ տիրլէր, լաքին տիկէր թարաֆտան կէրէք միլլէթիմիդտէ վէ կէ-քէքսէ էճնէպիլէրտէ խուսուա ավամ թազըմը արասնտա կէօրիւնմէյէնին մէվճուտիյէթինէ շի-փհէ էտէն թովմասլարըն սայըսը հէր հանկը պիր գէմանտա օլտուղունտան գիյատէ տիր:

Պիր սէնէ էվվէլ եօլճուլուզ էտէր իքէն պու-լունտուղում վախօնտա պիր ֆրանսըզ եօլճու տախի վար իտի. մէրզում միւսահապէթ էնսա-սընտա պէնիմ պիր վաիզ օլտուղունու անլատը-ղընտա պանա՝ «պէնիմ գարըմ տա չօզ տուա էտէր վէ քիլխայա կիտէր» տէտի. չօզ էյի իտէր իմիշ. սիզ տէ իտերսէնիզ էյի էտէրսիւնիզ տէտի-յիմտէ՝ «կէօրմէօրում քի տուա էտէրիմ» տէյու ճէվապ վէրտի: Անա՝ սիզ հավայը թէնէֆֆիւս էտէ՝ ըմիսինիզ տէտիյիմտէ՝ «էվվէթ տէտի», օլ թէնէֆֆիւս էթտիյինիզ հավայը կէօրիւյօ՞րմու-սունուզ՝ «խայը», էօյլէ իսէ կէօրմէտիյինիզ պիր շէյի թէնէֆֆիւս էթմէյէ հազընըզ եօզ տըր տէ-տիյիմտէ՝ ատէմ խաթասընը կէօրիւպ իլզամ օլտու:

Հագիգաթլարը անլամազըղըն եալընըզ թա-րիզի կէօրմէք տէյիլ տիր: Ալէմտէ վար շէյէլը քի անլէրի կէօրէրէք անլարըզ, վար շէյլէր տախի քի իշիտէրէք վէ եա լէմս էտէրէք անլարըզ. կէօք կիւրիւլթիւսիւնիւ կէօրմէյիզ, լաքին իշի-տիրիզ, շու գատէհտէքի սույուն սօղուզ մու, եօգսա սըճազ մը իտիյինի կէօրէրէք վէ եա իշի-տէրէք տէյիլ, իլլա էլիմիզ իլէ լէմս էտէրէք ան-լարըզ: Լաքին պիր թազըմ շէյլէր տէ վար տըր քի անլէր հասսէլէրիմիզ ալթընա տիւշմէզլէր, անլէրի ֆիքրիմիզլէ անլար վէ մէվճուտիյէթլէրինի նէթի-ճէլէրինտէն թաստըզ էտէրիզ, գուվվէի ճագիպէ, էլէքթրիքիլէթ, հավա, վէ սաիրէ կիպի իլմի հա-զիգաթլար պու գապիլտէն տիրլէր:

Լաքին պու պէօյիւք ալէմտէ վար պիր թա-զըմ հագիգաթլար տախի քի անլէրի շու մահտուտ ֆիքրիմիզ իլէ տէ անլամայըզ, անլէրի անճազ ալթընճը պիր հասսէ, եանի իման պասարըյա կէօրիւպ տէրք էտէր վէ մէվճուտիյէթլէրինի նէ-թիճէլէրինտէն թաստըզ էտէրիզ: Ալլան վէ բու-հանի ալէմին հագիգաթլարը պու գապիլտէն տիրլէր:

Պու խուսուտա ֆիքրիմիզ գիյատէ նուր վէ-րիր տիւշիւնկիւաիլ իլէ Մր. ֆրիսընսընըն կէօ-րիւնմէյէնին կէօրիւնիւր նէթիճէլէրի սէրնամէլի պէնտինի աթիտէ տէրճ էտէրիզ:

Պիր կիւն ծրանսանըն Կըրնօպլը շէնրինտէ պուլունույօր իտիմ, պիր սապան կէօրտիւք քի ճիւմլէ փէնճիրէլէրին շէրչիֆէ վէ տապան թաշ-լարը պիր նէվ ալթուն թէնկիւտէ սարը ինճէ գում իլէ տօլմուշ իտի, պունլար սօզագտան կէլմիշ օլամազ իտի, շիւնքի օրատա պու նէվ գում հիչ պուլունմազ իտի, իմտի օ նէրէտէն կէլմիշ իտի, օնու Աֆրիքատան կէլմիշ օլան սըճազ սիրօզօ ըիւզկեարը Ազ տէնիզ իւզէրինտէն կէլէրէք Կըր-նօպլըյա գատար կէթիրմիշ իտի: Սիրօզօ ըիւզ-կեարընը քիմսէ կէօրմէմիշ իտի, լաքին պու շէնրտէ անըն մէվճուտիյէթինի ինքեար էթմէք միւմքին տէյիլ իտի, պու շէօլ գումու Սիրօզօ ըիւզկեարընըն Կըրնօպլը իւզէրինտէն կէլմիշ ի-տիյինի իսպաթ էյլէտի: Այնի վազթտա Դեկտեմ-բեր իքէն օ հէվալիտէ Յունիս այընըն հէրարէթի կիպի սըճազ օլմասը պունա իքիւնճի պիր իսպաթ իտի: Պէօյլէճէ ըիւզկեարըն մէվճուտիյէթինի նէ-թիճէսինտէն անլարըզ: Անը կէօրմէտիյիմիզ իշիւն ինքեար իտէլիմ մի՞, օ քէնտինի չօք ֆարպը եօլ-լարտա իսպաթ էտէր, պազէն պալատէ զիքը էթ-տիյիմիզ կիպի շամաթասըզ եօլտա, պազէն տէ էն պէօյիւք վափօրլարը ճէվիզ գապուղու կիպի տէ-նիզին տիպիւնէ էնտիրէն, աղաճլարը քէօքիւնտէն սէօքէն, պէօյիւք քէրպանլարը շէօլիւն գումու ալ-թընա տէֆն էտէն, վէ պազէն տէ վըշըն սօվու-ղունտա գուլազլարըմըզա ըսլըզլայան թարգտա քէնտինի պէյան էյլէր:

Քիթապը Մուղատտէսին ասլնամէսինտէ ըիւզ-կեար վէ բուճ իշիւն գուլանըլան լուղէթ այնի տիր. պու իքիւնին այնի լուղէթ օլմասընտա տէրին պիր մանա վար, իքիսինին եէքտիկէրինէ միւշա-պիհ ճիհէթլէրի վար տըր, ըիւզկեար թապիաթտա նասըլ էսէր իսէ, պէօյլէ տէ Ալլանըն բունու ինսան ճիսսինտէ հարաքէթ էտէրէք քէնտի մէվճուտիյէ-թինի իզհար էտէր. պիզ անը քէնտի իրատէթիմիզ ալթընա ալամայըզ, օ իսթէտիյի կիպի իսթէ-տիյի եէրէ էսէր, պիզ անըն նէրէտէն կէլտի-յինի պիլմէյիզ, անը ասլա թութամազ, անլա-յամազ վէ գուվվէթիմիզ ալթընա ալամայըզ, Օ քէնտի ազիմ գուտրէթիլլէ եէնի հայաթ, եէնի ատէմլէր իսլազ էտէր: Անըն իշլէրի մէվճուտի-յէթինի իսպաթ էտէրլէր:

Պիր գաշ սէնէ էվվէլ Համպուրքտա պիր ատէմ գուհուր էթտի. մէրզում Քիթապը Մուղատտէսին հագիգաթլարընը գրիթիքա էտէրէք Քրիստոսուն մէվճուտիյէթինի տախի ինքեար էյլէտի: Պիր կիւն պու ատէմին եանընա պիր ամէլէ կէլիպ փրօֆէսօր էֆէնտի պէն սիյրէթճէ սօն տէրէճէ տիւշկիւն պիր հալտէ իտիմ, իշքիյէ օլ գատար

էսիր օլմուշ իտիմ քի չօզ տէֆա պէնի սօզազտա եաթար պուլուրլար իտի. դազանճըմըն սայքի հէփսինի իչքիյէ վէրտիյիմտէն ֆամիլեամ դայէթ փէրուշան իտի. քէնտիմի իսլահ իչիւն էթտիյիմ ճիւմլէ գարար վէ ճէհտլէրիմ պօշա տիւշտիւ. էնճամ սիգին ինքեար էթտիյինիգ ֆրիստոսու պուլտուս վէ օ պէնի թուլթուպ կիւնահ պաթաղընտան չըգարարազ պէնի եէնի ատէմ էյլէտի: Շիմտի ազատ վէ մուլթու պիբի իմ. փրօֆէսօր էֆէնտի, բիճա էտերիմ պու նասրլ միւմքին օլտու պանա իգահ էյլէ: Փրօֆէսօր պու վազաանըն էօնիւնտէ սիւքիւթ գալտը:

Անլամատորդըն սէպէպաէն պիր էմրի վազըը (փորձառութիւն) ինքեար էթմէքլիյին ֆաիտէսի եօզ տըր, սէն անլամագսան պիլէ, նէրէտէ պիր էսէր վար իսէ, օրատա պիր սէպէպ տախի վար տըր: Նէրէտէ եէնի պիր հայաթ մէյտանա կէլիյօր իսէ, օրատա անր հաւլ իտէն բուհու ինքեար էթմէք միւմքին տէյիլ տիր: Ալլահըն հիւքիւմէթ սիւքէն բուհու իսթէտիյի եէրէ էսէր:

Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

Ի ՔԻ Վ Ա Գ Ա Ա Ա Ա Ր



«Ալտանմայընըզ, Ալլահի իսթիհզա օրմմազ, զիրա ատէմ հէր նէ էքէրսէ հէման անր պիքէճէք տիր»: Գաղ. 6. 7:

Տիսսիգլիք ինգըլապընըն միէսսիսի ինկիլիզ չըքսլինին երւգիւնճիւ տօղուշ կիւնիւ միւնասէ պէթիլէ պուլնտան պիր գաչ այ էվվէ Մայիս 5 տէ մէրգուսուն թապիլէրի Լօնտրանըն պէօյիւք թրօքատէրօ լօքանիւսընտա պիր գիյնէթ թէր. թիպ էթտիլէր: Տիսսիգ ինգըլապիյուլնտան իքի երւգ պէլի քիմսէլէր սուֆրանըն էթրաֆընա տի. գիւմիշ իտիլէր:

Թաամտան սօնրա տանս վէ թէրէնիւմլէր տախի օլսճազ իտի: Չազըրոլնտան Մր. ճօրճ Չուէյլ նուլթգ էթմէք իչիւն այաղա գալգտը, քէնտիին տինլէյէլէրին հիճվլէրի իչիւնտէ պաշլատը քրիսթիյան քիլիսալարընը իսթիհզա էթմէյէ. ճամ եօլուլտա Պօղոս Առաքեալա վուգու պուլան բույայը վէ տաիա տինէ աիտ պաշգա մատտէլէրի հիճվ էյլէտի:

«Ենէլիւմ վէ իչլիւմ գիրա եարըն էօլիւրիւզ» տէտի վէ ալգըլար իչիւնտէ սէօգիւնիւ պիթիբիպ օթուրտու. լաքին ափանսըզ Մր. ճօրճուլն պաշը օթուրտուղու սանտալեանըն իւգէրինէ էյիլտի... Մր. ճօրճ արթըզ եաշամայօր, ֆիւճճէթէն վէֆամ էթմիշ իտի, օլ սալօնտա վուգու պուլան հէյէճանը խայալ էսէպիլիբսինիգ: Էօլիւմ մէլէյի օ շէրիւլէրին ճէմիյէթիւնի թէէտիպ էթմէք իչիւն օլա քի պիր ճան իլէ իգթիֆա էթմէգ տիւշիւն. ճէսի իլէ գաչան գաչանա օլտու: Պու վագաա

Լօնտրատա պէօյիւք պիր հէյէճան մէյտանա կէ. թիրտի: Պու վագաա միւնասիպէթիլէ ֆարիգտէ պիր գամօլիկ կազէթասընըն շու սէրնամէ իլէ նէշը էթտիյի պիր պէնտ շայանը տըգգամ տըր: «Քիւֆըր էթտի վէ թէքտիր օլուլտու»:

«Ճամանակ» տան

**

Պիր կիւն Ալմանիանըն պիր քիւլիւք շէիրինտէ պիր գաչ ապէրլէր կէճ վագթտա իգիւսիզ օլա. ըազ արգատաշլարը իլէ պէրապէր քէյֆ էտիյօր. լար իտի: Գըշլայա տէօնէր իքէն բուխսամ թեա. դատարը օլմատըղը սէպէպտէն եօլտան սա. փարագ կէօրիւնմէմէք իչիւն պիր մէզարիստան իչիւնտէն կէլիյօրլար իտի:

Պուլնլարտան պիրի երւքսէք պիր թաշ իւգէ. ըինէ չըգըպ արգատաշլարընս նուլթգ էթմէյէ պաշլատը, անլէրին մէտիյիլէրինտէն ճէսարէթ. լէնէրէք սէօգիւնիւ տինի մատտէլէր իւգէրինէ չէվիբտի: Մէզար թաշլարը իւգէրինտէ եազըը օլան քէլուլարը հիճվ էյլէտի: Խիթապէթիւնէ տէվամ էտէրէք փիւսթաիճասընս Ալլահը տա իսթիհլա էտիպ տէտի:

«Էյ Ալլահ էյեր սէն մէվճուլտ իսէն քէնտինի պիր տէֆա կէօսթէր պագալըմ»: Պու անտէ իւ. գէրինտէ տուրտուղու թաշ տիպիւնտէն գըրըլըր վէ պիր պաշըրըշ իշիտիլտի, հէնուգ հիճվ էտէն խաթիպին իքի այագլարը թաշըն ալթընտա գալ. մըշ իտի. մէրգուսուլն արգատաշլարը տէհէթէ տիւշէրէք քէնտիլէրէ կէլէճէք օլան թէքաիբտէն գորգուպ այագլարը էլ իւմիշ օլան արգատաշլա. ընը եազընըզ պըրագըպ ֆիրար էթտիլէր: Մեր. գուլմ զայէթ շէտիտ աշըրլար չէքմէքտէ իտի իսէ տէ, քէնտինի օլ աղըրըլըն ալթընտան գուրթարան պիր քիմսէ եոգ իտի, պու աղըրլար. տան տաիա զիյատէ հըսս էյլէտի փիշմանլըգ, ճանընս իւլթըրապ վէրիյօր իտի: Պու հաշտէ սա. պաիա գատար եալընըզ գալտը: Ալլահ քէնտինին մէվճուլտիյէթիւնի հէյպիթըլ պիր սուրէթտէ պէ. յան էթմիշ իտի:

Սապաիյայըն էրքէնտէն օրատան կէչէն պիրի քէնտինի կէօրտիւ վէ խասթախանէյէ նագլ օլուլ. տու: Տօգթորըրըն ճիւլէ ճէհալէրինէ բաղմէն վագթ կէչմիշ օլտուղուլնտան այաղընըն պիրինի քեմէյէ մեճպուր օլտուլար, ուլտու վագթ օրատա եամթորգտան սոնրա պիր այաղընըզ գայ էթմիշ օլարագ խասթախանէյի պրագտը: Պու վագաա իւգէրինէ միւսթէիլի կիւնս թիւլպէ էտերէք քէնտի Ալլահընը պուլտու:



ՇԱԲԱԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Յուլիս 19-25.— ՕՐԱԿԱՆ ՀԱՅՐ

Կիր. Հոգ մի ընէք թէ ինչ պիտի ուտէք. Մատթ. 2. 25-34:

Բ. շբ. Մեր ամէն օրուան հացը մեզ տուր. Մատթ. 2. 9-15:

Գ. շբ. Աշխատիլ եւ ձեռքերուն վաստկածէն ուտել. Բ. Թես. Գ. 6-13:

Դ. շբ. Կերակուր եւ հանդերձով գոհացէք. Ա. Տիմ. 2. 6-10:

Ե. շբ. Կը խղճամ այս ժողովուրդին վրայ. Մատթ. ԺԵ. 32-39:

Ուր. Յիսուս կը պատրաստէ նախահաշը. Յովհ. ԻԱ. 4-13:

Շբ. երբ որ հացը կը կտրէր, ճանչցան զԱյն. Գող. ԻԳ. 25-35:

Հարցում. Ո՞ր տեսակ հոգեր ըլլալու են մեր օրական հացը: Յիսուս մեր կերակուրին համար ալ կը հոգայ:

Յուլիս 26 - Օգոստոս 1.— ԱՍՏՈՒԾՈՅ ԾԱՌԱՆ

Կիր. Իսրայէլ Աստուծոյ ծառան ընտրուած. Եսայ. ԽԳ. 1-6:

Բ. շբ. Բայց կոյր ու խուլ է. Եսայ. ԽԲ. 18-25:

Գ. շբ. Աստուած ինչո՞ւ ուրիշ ծառայ մը կ'ընտրէ. Եսայ. ԽԲ. 1-7:

Դ. շբ. Հեծանդաններուն լոյս ըլլալու. Եսայ. ԽԹ. 1-9:

Ե. շբ. Յոգնածներուն յարմար ժամանակին խօսելու. Եսայ. Ծ. 4:10:

Ուր. Անոնց մեղքը կը վերցնէ. Եսայ. ԾԲ. 13. ԾԳ. 12:

Շբ. Տերոջը շնորհաց տարին աւետելու. Ես. ԿԱ. 1-3:

Հարցում. Աստուած իսրայելը ի՞նչ նպատակի համար ընտրած էր: Ո՞վ է նոր ծառան: Սա իր նպատակը ինչպէ՞ս կատար հանեց:

Օգոստոս 2-8.— ՅԵՍԱԿԱՐՁ ԱԿՆԱՐԿ

Կիր. Հին ժամանակներու վրայ կը խորհիմ. Սաղ. Զ. 6-21:

Բ. շբ. Բոլ գործերդ պիտի պատմեմ. Սաղ. ՃԽԳ. 1-6:

Գ. շբ. Ինչ որ նախահայրերու ըրաւ. Բ. Օրին. ԼԲ. 1-14:

Դ. շբ. Միտքդ բեր թիմայ ուրկէ որ ինկար. Յայտ. Բ. 1-7:

Ե. շբ. Գովտի կինը մտքերնիդ բերէք. Գող. ԺԵ. 26-33:

Ուր. Ո՞չ մէկը որ ձեռքը մաճին վրան կը դնէ, ետին կը նայի. Գող. Թ. 57-62:

Շբ. Անցեալ 7 պէճիներու վրայ խորհեցէք. երբ. Ժ. 32-39:

Հարցում. Ի՞նչ պիտի յետադարձ ակնարկներ

վտանգաւոր են եւ ո՞րպիսիք օրհնաբեր: Ինչո՞ւ համար իւրաքանչիւր յետադարձ ակնարկ զմեզ աւելի բոցավառելու է:

Օգոստոս 9-15.— ԱԲՐԱՀԱՄ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐԵԿԱՄ

Կիր. Ինչպէս որ Տէրը իրեն ըսաւ. Ծննդ. ԺԲ. 1-7:

Բ. շբ. Աբրահամ հաւատաց Աստուծոյ. Ծննդ. ԺԵ. 1-6:

Գ. շբ. Աբրահամէն ընելիքս ի՞նչպէս ծածկեմ: Ծննդ. ԺԸ. 17-33:

Դ. շբ. Բոլ մէկ հատիկ զաւակիդ չխնայեցիր. Ծննդ. ԻԲ. 1-18:

Ե. շբ. Աստուծոյ Սիրելին. Եսայ. ԽԱ. 8-14:


Ուր. զԱստուած Սիրողը. Բ. մնաց. Ի. 1-20:

Շբ. Աստուծոյ բարեկամը կոչուած. Յակոբ. Ի. 20-26:

Հարցում. Աստուած ինչո՞ւ բարեկամի մը պէտք ունի: Աստուած Աբրահամը ի՞նչ կերպով իբր իր բարեկամը կը համարէր:



ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԴԵՈՒԱԾ ԳԻՐԲԸ



Գրածախներու օրկանի մը մէջէն հետեւեալ տեղեկութիւնները կը քաղենք.


«Աստուածաշունչը տակաւին առաջուան նման աշխարհի մէջ ամենէն շատ գնուած գիրքն է, նա ուր է գրքէ աւելի ժողովրդական է. անցեալ տարի միայն 30 միլիոն հատոր ծախուեցաւ աշխարհի ամէն կողմը: Ամէն տարի գիտնականներ կ'աշխատին զայն նորանոր գաւառաբարբառներու թարգմանել:

Միայն «Ամերիկեան Աստուածաշունչի ընկերութիւնը» 175 զանազան լեզուներով կրցած է թարգմանել զայն:

Իսկ մնացեալ երկիրներու ընկերութեանց թարգմանածը ասոր 9 անգամը կ'անցնի:

Միացեալ Նահանգներու մէջ անցեալ տարի միւս տարուան գրեթէ երկու անգամը շատ գնուեցաւ: Նոյնամասն արդիւնքներ տեսնուած է նաեւ ուրիշ երկիրներու մէջ»:

Գիտ.— Մարտիլիոյ մէջ ալ այսօր մի քանի գիտնականներ, տարիներէ ի վեր կ'աշխատին Աստուածաշունչը Հնդկաստանի գաւառաբարբառներէն միոյն թարգմանելու:



ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ

Ս ու ռ ի ա . — Հալէպէն բարեկամ մը կը գրէ մեզի . « . . . ներկայիս գաղթականներու վիճակը ասելի սրտաճարմիկ է քան ուրիշ առեւտրի, որովհետեւ գործերը բազմաթիւ անհաջողակ են, ուստեստեղծներու գիւտերն ալ սովորականէն ասելի բարձրացած, այնպէս որ Ֆրանսայի գաղթականները քանի մը տեսակէտով ասելի բախտաւոր են . այդ պատճառաւ տեղույս գաղթականութեան հարիւրքին 90ը Ֆրանսա գաղթելու ձգտում ունի, քանի որ աշխատողին գործ կը պակսի եւ ժրջան ձեռքեր ամուսնեան դատապարտուած են : Սուրիոյ գիւղերէն ասելի՛ աղետալ լուրեր կը հասնին մեզ մալարիայի նախնորներու նկատմամբ : Action Chrétienne en Orientի հիւանդապահ միսիոնարուհի Sœur Alice Humbert-Droz կը գրէր մեզ քանի մը օր առաջ թէ իր գիւղերը այցելութեան միջոցին հայ գիւղացի գաղթականութիւնը սարսափելի վիճակի մէջ գրտաւ : Աղէպէն մինչեւ Կրքէսան միայն մէկ շաբթուան մէջ 8000 քինինի դեղահատ ցրուեց եւ հարիւրաւոր հիւանդներու նայեցաւ : Այս կողմերը շատ հազուադէպ է բժիշկներու այցելութիւնը :

Սոյն Ընկերութեան կողմէ վերջերս Սուրիա մեկնող (մեզ ծանօթ) վիրաբոյժ Dr. Monnier եւ Տիկինը հետեւեալը կը գրեն մեզ . « Մարսիլիոյ քեմիս մէջ թշուառներ տեսանք, Պէյրուսի մէջ ասելի շատ, թէեւ ժողովուրդին մէկ մասը արդէն կը զբաղի ո եւ է գործով մը, բայց Հալէպի քեմիս շատ ասելի թշուառութիւն կը ներկայացնէ քան մեր տեսած միւս տեղերը : Հիւանդներ ու տկարներ բազում, նոյն առեւտրականութիւնն եւ իսկական անօթութիւն » :

Իտոյ . — Անցեալ թուով արդէն տեղեկագրած էինք թէ նոյն Ընկերութիւնը իր միսիոնարուհիներէն միոյն միջոցաւ հոն քեմիս դպրոցական անկարող եւ անօթի աշակերտաց համար օրական զօրաւոր ճաշ մը կուտայ վեց ամիսէ ի վեր : Այժմ մանկանց թիւը 250ը անցած է :

Ազգերու Լիկայի ներկայացուցիչ եւ մեզի ծանօթ Տօքթ. Նանսէն Հայաստան մեկնեցաւ, հոն մէկուկէս ամիս մ'նալով՝ բուն տեղին վրայ քննութիւններ կատարելու եւ Խորհրդային իշխանութեանց հետ տեսակցելու, Յունաստանէն դէպի Հայաստան փոխադրուելիք գաղթականներու մասին : Տօքթ. Նանսէնի ճամբորդութեան արդիւնքը յաջորդիւ պիտի տեղեկագրենք :

Հայաստան . — Յունիս 25ի հինգշաբթի օրը, ցորեկուան ժամը 5ին, սոսկալի տեղատարափ մը սկսած է Երեւանի շրջանին մէջ, որմէ մէկ ժամուան մէջ գոյացած բազմաթիւ լեռնային վտակները յորդած եւ միանալով Երեւանի մէջէն անցնող քանի մը յորզող ջուրերուն, այնքան ուժգնօրէն խուժած են քաղաքին վրայ որ բազմաթիւ շէնքեր քանդուած են եւ անոնց բնակիչները մ'նացած են անպատասպար :

Ամէնէն ասելի վնասուած են Համալսարանի շինութիւնները, Կարմիր Խաչի պահեստները, Քաղաքային երկրորդ հիւանդանոցը : Քաղաքին բոլոր նկուղները ջուրով լեցւած են : Երեւանը Նորք արուարձանին միացնող մեծ կամուրջը, ինչպէս նաեւ բազմաթիւ փոքր կամուրջներ քանդուած են : Արուարձանը կտրուած է քաղաքէն : Շրջակայ գիւղերը հեղեղուած են : Թէ՛ քաղաքի եւ թէ՛ շրջակայից մէջ կան մարդկային կորուստներ, որոնց թիւը տակաւին յայտնի չէ :

Կառավարութիւնը շարժման ենթարկած է քաղաքին աշխատութեան ընդունակ բոլոր ազգաբնակչութիւնը, կոտելու համար աղետին հետեւանքներուն դէմ . յատուկ յանձնաժողով մը կազմուած է ղեկավարելու համար այս գործը եւ ճշգրիտ համար գոյացած վնասը : Ըստ նախնական տուեալներու վնասը կը հասնի քանի մը միլիոն ռուպլիի :

Այս արկածեալ մեր եղբայրներուն ի նըպաստ՝ մեզ ղրկուելիք գումարները պատկանեալ օժանդակ մարմիններու սիրայօժար կը փոխանցէ Խմբագրութիւնս :

Շ ն ո Ր հ ա կ ա լ ու թ իւ ն . — Խմբագրութիւնս մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնէ Ֆրանսայի Հայասէր Ընկերութեան Action Chrétienne en Orientի կեդրոնի Graffenstaden եկեղեցւոյ համայնքին, որ անցեալ ամսուան իր Միսիոնարական հանդէսին առթիւ « Բանբեր » նալ յիշելով 150 Փրանքի նուէր մը ըրած է :



« ԲԱՆԲԵՐ » Ի ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԾԱՀԵՑԷՔ

 ԸՆԿԵՐԴ « ԲԱՆԲԵՐ » Ի ՄՍՍԻՆ ՀԵՏԱՔՐՔՐԷ



Le Gérant : Pasteur Kaltienbach

Տպագր. Ա. ԵՐԷՅԵԱՆ
 40, Բիւ տէ Տօմիսիքէն . Մարսէլ